ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԾՔ-ԳՀԱՊՁԲ-22/31» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք.Ծաղկաձոր

27 հոկտեմբեր 2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ռ.Եղիազարյան
անդամներ՝ Ն.Խաչատրյան, Ի.Եղիազարյան, Ն.Սիմոնյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-22/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների վարման վերաբերյալ

1.1 Գնման առարկա է հանդիսանում Ծաղկաձոր համայնքի կարիքների համար <<***Եղևնիների***>> **ձեռքբերումը**:

1.2 **«ԾՔ-ԳՀԱՊՁԲ-22/31»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել էին բանակցությունների՝ ***27.10.2022թ. ժամը 11:00***-ին:

1.3 Միաժամանակյա բանակցություններին ներկա էր Հրանտ Սեդոյան Ա/Ձ-ն: Վերջինս իր կողմից նախնական ներկայացված գնային առաջարկը չի վերանայել: Հանձնաժողովը որոշեց ընդունել մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-22/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի և ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

2.1 **«ԾՔ-ԳՀԱՊՁԲ-22/31»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **Հրանտ Սեդոյան Ա/Ձ**-ին՝ որպես հրավերի պահանջները բավարարող, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում տուժանքի ձևով՝ գնման գնի 10/տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ տուժանքի ձևով՝ գնման գնի 15 /տասնհինգ/ տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ռ.Եղիազարյան	
Անդամներ՝ Ն.Խաչատրյան	
Ի.Եղիազարյան	
Ն.Սիմոնյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	